Կարգապահական գործ թիվ ԿԳ-24162

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ԳԱՅԱՆԵ ՎԱՉԻԿԻ ԼՅՈՒԴՎԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Կարեն Խալաթյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի և Արաքս Վարդանյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան **Գայանե Վաչիկի Լյուդվիկյանին (այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 1582), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Շուշան Խաչատրյանը (այսուհետ՝ նաև Դիմող), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), հայտնել է, որ իր թոռ՝ Խաչատուր Ստեփանյանի շահերը ներկայացնելու համար 05.10.2023 թվականին դիմել է փաստաբան Գայանե Լյուդվիկյանին և կնքել պայմանագիր:

Դիմողը հայտնել է, որ ծառայությունների մատուցման համար վճարել է 2.000.000 ՀՀ դրամ:

Դիմողի պնդմամբ, 10.02.2024 թվականին ինքը հրաժարվել է փաստաբանից՝ պահանջելով վերադարձնել վճարված գումարը:

Դիմողը ներկայացրել է նաև ընդունման-հանձնման ակտը, որի համաձայն՝ փաստացի վճարված գումարից փաստաբանի աշխատանքը կազմել է 500.000 ՀՀ դրամ, իսկ 1.500.000 ՀՀ դրամը փաստաբանը պարտավորվել է վճարել 2024 թվականի մայիսի վերջին:

թիվ ԿԳ-24162-2-Ա
13.11.2024թ.

Ըստ Դիմողի՝ փաստաբանը մինչ օրս չի վճարել նշված գումարը:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 16.08.2024թ. բացատրությամբ ըստ էության հայտնել է, որ բացի 27.06.2024թ. ներկայացրած ապացույցներից, այլ գրավոր ապացույցներ չունի:

Դիմողը 11.11.2024թ. դիմումով հայտնել է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանը վերադարձրել է 1.500.000 ՀՀ դրամ գումարը, ինչպես նաև խնդրել է կարճել հարուցված կարգապահական վարույթը:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Գայանե Լյուդվիկյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Շուշան Խաչատրյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանը որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ 08.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է՝ Օրենքի 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 29.07.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ պայմանագրի լուծումից հետո պետք է մինչև 2024թ մայիսը Դիմողին վերադարձներ վճարված գումարները, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողացել:

Միաժամանակ, Փաստաբանը պարտավորվել է մինչև 2024թ. սեպտեմբեր ամիսը գումարն ամբողջությամբ վերադարձնել Դիմողին:

Փաստաբանը 11.11.2024թ. գրությամբ հայտնել է, որ ամբողջությամբ վճարել է ընդունման-հանձնման ակտով նախատեսված 1.500.000 ՀՀ դրամը:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 26.07.2024թ. թիվ 315-Ա/ԿԳ-24162 որոշմամբ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք)** 3.8.4 (1) ենթակետի

խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

02.08.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին, այնուհետև 11.09.2024թ. Պալատի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարի գրությամբ վերամակագրվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ նաև՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 02.10.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-2 կետերում նշված փաստերը, ինչպես նաև այն փաստը, որ Փաստաբանը պայմանագիրը լուծելիս չի վերադարձրել Դիմողին 1.500.000 ՀՀ դրամը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 02.10.2024թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 13.11.2024թ. ժամը 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

1. Դիմող Շուշան Խաչատրյանի և Փաստաբան Գայանե Լյուդվիկյանի միջև 05.10.2023 թվականին կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր և ծառայությունների համար Դիմողը վճարել է Փաստաբանին 2.000.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է 05.10.2023թ. պայմանագրով, ինչպես նաև կողմերի բացատրությամբ:*

2. Դիմողը 10.02.2024թ. հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ինչի կապակցությամբ նրանց միջև կնքվել է ընդունման-հանձնման ակտ, որի համաձայն՝ փաստացի վճարված գումարից փաստաբանի աշխատանքը կազմել է 500.000 ՀՀ դրամ, իսկ 1.500.000 ՀՀ դրամը Փաստաբանը պարտավորվել է վճարել մինչև 2024 թվականի մայիսի վերջ: *Սույն փաստը հաստատվում է 10.02.2024թ. ընդունման-հանձնման ակտով:*

3. Փաստաբան Գայանե Լյուդվիկյանը վերադարձրել է Դիմող Շուշան Խաչատրյանին 1.500.000 ՀՀ դրամը: *Սույն փաստը հաստատվում է 10.02.2024թ. ընդունման-հանձնման ակտում 08.11.2024թ. կատարված գրառմամբ, ինչպես նաև Դիմողի 11.11.2024թ. դիմումով:*

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Գայանե Լյուդվիկյանը փաստաբան է հանդիսանում 25.12.2012թ. և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ... :*

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *Փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ՝ առկա չէ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում

միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններ իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում ոչ միայն փաստաբանի կողմից որոշակի վարքագծի դրսևորման հանգամանքը, այլ նաև դրսևորվող վարքագծում Օրենքով և/կամ Կանոնագրքով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների առկայության հանգամանքը, որի պայմաններում միայն Հանձնաժողովը կարող է քննարկել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը:

Այս համատեքստում, Կանոնագրքի մի շարք դրույթների կիրառելիությունը ևս ինքնանպատակ չէ և Հանձնաժողովի կողմից այդ դրույթներով ամրագրված պահանջների հնարավոր խախտման հատկանիշների համատեքստում փաստաբանի վարքագծի քննարկման իրավական հնարավորությունն ուղղակիորեն փոխկապակցված է որոշակի պայմանների առկայության կամ բացակայության հետ:

Դիմողն, ըստ էության, Փաստաբանին վերագրում է պայմանագիրը լուծելիս ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, չվերադարձնելու վարքագիծը:

Այս համատեքստում, անհրաժեշտ է նշել, որ **Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի 1-ին պարբերության համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:*

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածով պայմանավորված Օրենքով և Փաստաբանի վարքագծի կանոնագրքով փաստաբանի համար վստահորդի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունից բացի փաստաբանի համար սահմանվում են նաև այլ պարտականություններ, որոնք ենթակա են կատարման ինչպես հանձնարարության կատարման ընթացքում, այնպես էլ դրա ավարտին՝ մասնավորապես, պայմանագիրը լուծելուց հետո վերադարձնել ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար:

Սույն կարգապահական գործի շրջանակներում Դիմողի և Փաստաբանի կողմից ներկայացված բացատրությունների և ապացույցների ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ փաստաբան Գայանե Լյուդվիկյանը 05.10.2023 թվականին կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր Դիմող Շուշան Խաչատրյանի հետ, ինչի համար վերջինս ծառայությունների դիմաց վճարել է Փաստաբանին 2.000.000 ՀՀ դրամ: Այնուհետև, Դիմողը 10.02.2024թ. հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից, ինչի կապակցությամբ նրանց միջև կնքվել է ընդունման-հանձնման ակտ, որի համաձայն՝ փաստացի վճարված գումարից փաստաբանի աշխատանքը կազմել է 500.000 ՀՀ դրամ, իսկ 1.500.000 ՀՀ դրամը Փաստաբանը պարտավորվել է վճարել մինչև 2024 թվականի մայիսի վերջ: Դիմողի դժգոհությունը կայացել է նրանում, որ Փաստաբանը մայիս ամսվա դրությամբ չի վերադարձրել գումարները:

Այս համատեքստում հարկ է նշել, որ 11.11.2024թ. Փաստաբանի և Դիմողի կողմից ներկայացվել են նույնաբովանդակ դիմումներ, այն մասին, որ Փաստաբանը վերադարձրել է ընդունման- հանձնման ակտում նշված վերադարձման ենթակա 1.500.000 ՀՀ դրամը: Փաստաբանը ներկայացրել է 10.02.2024թ. ընդունման-հանձնման ակտը, որում 08.11.2024թ.Դիմողը կատարել է հետևյալ գրառումը. «*Ստացա ընդունման և հանձնման ակտի ամբողջ գումարը՝ 1.500.000 դրամ*»: Բացի նշվածից, Դիմողը նաև խնդրել է հարուցված կարգապահական վարույթը կարճել:

Տվյալ դեպքում, փաստացի քննարկման առարկա է դառնում, պայմանագիրը լուծումից հետո կնքված հանձնման-ընդման ակտի շրջանակներում Փաստաբանի գումարի վերադարձման պարտականությունը: Այսինքն, կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի իմաստով պայմանգիրը լուծելիս փաստաբանը ստանձնել է գումարը վերադարձնելու պատրաստակամություն, ինչի կապակցությամբ կազմվել է հանձնման-ընդման ակտ, հետևապես՝ Փաստաբանին վերագրվող վարքագիծը կարգապահական խախտման տեսանկյունից կարող էր քննարկվել միայն այն դեպքում, երբ Փաստաբանը հրաժարվեր գումարի վերադարձումից և դրսևորեր անգործություն:

Այս առումով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 08.11.2024թ. դրությամբ Փաստաբանը արդեն իսկ կատարել է գումարի վերադարձման պարտականությունը,

Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագիծը որևէ կերպ չի հակասում Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջներին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում բացակայում է փաստաբան Գայանե Լյուդվիկյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Գայանե Վաչիկի Լյուդվիկյանի (արտոնագիր՝ թիվ 1582) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.4 (1) ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24162 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:*

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-24162-2-Ա
13 նոյեմբերի 2024թ.
ք.Երևան